

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ԱՐԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆՆ ՕԺԱԴԱԿՈՂ ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ
(ԹԽ)

1. Նպատակ	1
2. Խնդիրներ	2
3. Սկզբունքներ.....	3
4. Թեմատիկ խմբի կազմ.....	4
5. Գործառնական շրջանակ.....	4
6. Ակնկալվող արդյունքներ	4
7. Անդամների իրավունքներ.....	5
8. Անդամների պարտականություններ.....	5
9. Թեմատիկ խմբի աշխատաքների համակարգում և կազմակերպում	5
10. Ժամանակացույց	6
11. Կարևոր փաստաթղթեր.....	6

1. Նպատակ

Թեմատիկ խումբը նշված տեղեկատվական համակարգի ստեղծման գործընթացի շուրջ կամավորության սկզբունքով միավորված շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների և առանձին փորձագետների խումբ է, որի նպատակն է՝

աջակցել աղետների ռիսկի և կլիմայի փոփոխության հարմարվողականության տեղեկատվական միասնական համակարգի (այսուհետ՝ **ԱՌԿՓՀ ՏՄՀ**) նախագծման և ստեղծման գործընթացին, այդ թվում՝ համակարգի հայեցակարգային հիմքերի, մոդուլային ճարտարապետության և գործառնական շրջանակի ձևավորմանը, ինչպես նաև անհրաժեշտ իրավական և տեխնիկական փաստաթղթերի, ինստիտուցիոնալ կառավարման մեխանիզմների մշակմանն ու համաձայնեցմանը:

ՏՄՀ համակարգի ստեղծումը բխում է ՀՀ «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքի¹ **8-րդ հոդվածի 1-ին մասում ներկայացված** աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների **2-րդ կետից², որը** նախատեսում է հետևյալը՝

✓ **«Աղետների ռիսկի և կլիմայի փոփոխության հարմարվողականության տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը և կառավարումը».**

Թեմատիկ խումբը (ԹԽ) համակարգի թվայնացման և ավտոմատացման ամբողջ փուլում տրամադրում է շարունակական մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն՝ ի նպաստ լուծման կիրառելիության և կայուն գործարկման ապահովման:

2. Խնդիրներ

2.1 **Մշակել** աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման միասնական, թվային և ավտոմատացված համակարգի **տեսչականը (հայեցակարգը)**՝ հիմնված միջազգային լավագույն փորձի, ազգային ռազմավարական փաստաթղթերի և գործող ինստիտուցիոնալ շրջանակի վրա:

2.2 **Օժանդակել ԱՌԿՓՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** մշակման ենթաօրենսդրական ակտի մշակմանը, ներառյալ **տեխնիկական պահանջները** (ֆունկցիոնալ, ոչ ֆունկցիոնալ, տվյալների, անվտանգության, ինտեգրման և այլն) և համակարգի **մոդուլային ճարտարապետության նախագիծը:**

2.3. Օժանդակել աղետների և կլիմայական ռիսկերի գնահատման (ԱԿՌԳ) գործընթացների թվայնացման և ավտոմատացման իրավական և տեխնիկական շրջանակի մշակմանը, անհրաժեշտության դեպքում գործող գնահատման մեթոդաբանությունների և գործիքակազմերի վերանայմանը, ինչպես նաև ԱԿՌԳ թվայնացված և ավտոմատացված մոդուլի մշակմանը՝ որպես **ԱՌԿՓՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** բաղկացուցիչ մաս (համապատասխանում է 2025թ. օգոստոսի 12-ի ՀՀ վարչապետի **705-Ա որոշման** 8-րդ միջոցառմանը)

2.4. Օժանդակել «Աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանները էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին ներկայացնելու, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակմանը, ինչպես նաև սույն կարգին համահունչ թվային մոդուլի ստեղծմանը՝ որպես **ԱՌԿՓՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** առանձին բաղադրիչ (համապատասխանում է 2025թ. օգոստոսի 12-ի ՀՀ վարչապետի **705-Ա որոշման** 42-րդ միջոցառմանը).

¹ «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքն ընդունվել է 2025 թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտնում 2027 թ. հունվարի 1-ից

² <https://www.arlis.am/hy/acts/206798#>

2.5 **Օժանդակել** Սենդայի գործողությունների ծրագրի, ԱՌԿ ռազմավարության, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների **իրականացման թվային մոնիտորինգային համակարգի (կամ համակարգերի)** ձևավորմանը՝ ներառյալ դրանց **իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական շրջանակների մշակումը**:

2.6 **Օժանդակել** վաղ նախազգուշացման և ազդարարման համակարգի ստեղծման **հայեցակարգի նախագծի վերջնականացմանը** և դրա ինտեգրմանը **ԱՌԿՓՇԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** շրջանակում՝ որպես առանձին մոդուլ:

2.7 **Աջակցել ԱՌԿՓՇԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** տեսլականից բխող **այլ մոդուլների նույնականացմանը, ձևավորմանը և զարգացմանը**, ինչպես նաև դրանց համապատասխան **իրավական շրջանակի և տեխնիկական առաջադրանքի մշակմանը**:

2.8 Օժանդակել **ԱՌԿՓՇԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** ձևավորման գործընթացի մշտադիտարկման ապահովմանը և տրամադրել մասնագիտական աջակցություն ըստ անհրաժեշտության համակարգի ձևավորման ողջ ընթացքում:

3. Սկզբունքներ

- **Կամավորություն.** Թիմում ընգրկվել և աշխատել կամավորական հիմունքներով է
- **Մասնակիցների իրավահավասարություն.** Թես բոլոր անդամները ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:
- **Որոշումների ընդունման համաձայնեցվածություն.** Թես-ում միանձնյա որոշումներ չեն ընդունվում: Որոշումները կայացվում են համատեղ քննարկումների արդյունքում:
- **Գործունեության թափանցիկություն և հաշվետվողականություն.** Թես աշխատանքները չեն իրականացվում գաղտնի: Բոլոր աշխատանքները արձանագրվում են և արխիվացվում: Ըստ անհրաժեշտության դրանք հրապարակվում են վեբ և սոցիալական հարթակներում:
- **Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն.** Յուրքանչյուր ոք կարող է մաս կազմել Թես, եթե ունի համապատասխան կարողություններ, հմտություններ կամ Թես աշխատանքներին նպաստելու այլ բնույթի ներուժ:
- **Հետևողականություն.** Թես աշխատանքները իրականացվում են հաստատված պլան ժամանակացույցով և խնդիրների լուծման տրամաբանական հաջորդականությամբ, իսկ եթե դրանց զուգահեռ իրականացումը չի խոչընդոտում իրար, ապա նաև զուգահեռ:
- **Մարդու իրավունքներ և մարդասիրություն.** ստեղծվող վերջնարդյունքները չպետք է ոտնահարեն մարդու իրավունքները և պետք է լինեն մարդասիրական:
- **Ճկունություն.** Ընթացիկ զարգացումները հաշվի են առնվում Թես-ում և ըստ անհրաժեշտության գործունեությունը հարմարցվում է պետական օրակարգին՝ մշտապես ապահովելով ներդաշնակությունը պետական քաղաքականության հետ:

4. Թեմատիկ խմբի կազմ

Թեմատիկ խումբը բաց է բոլոր շահագրգիռ կողմերի համար, ովքեր պատրաստ են նպաստել **ԱՌԿՓՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** ձևավորմանը, ինչպես նաև սահմանված այլ խնդիրների լուծմանը:

5. Գործառնական շրջանակ

Թեմատիկ խմբի հիմնական գործունեությունը ուղղված է լինելու սահմանված խնդիրների լուծմանը և **ԱՌԿՓՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ** ձևավորման գործընթացին փորձագիտական-խորհրդատվական աջակցությանը:

6. Ակնկալվող արդյունքներ

Ակնկալվող արդյունք	Հղում
ԱՌԿՓՀ տեղեկատվական միասնական համակարգի հայեցակարգի մշակումը և դրա ներկայացում լիազոր մարմնին հաստատման	«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենք ընդունված 2025 թ. ապրիլի 18-ին: Ուժի մեջ է մտնում 2027 թ. հունվարի 1-ից
ԱՌԿՓՀ տեղեկատվական միասնական համակարգի ենթաօրենսդրական ակտի մշակում և դրա ներկայացում լիազոր մարմնին հաստատման	«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենք ընդունված 2025 թ. ապրիլի 18-ին: Ուժի մեջ է մտնում 2027 թ. հունվարի 1-ից
ՀՀ Վարչապետի 2025թ. N 705-Ա որոշման 8-րդ միջոցառում – ենթաօրենսդրական ակտի մշակում և ներկայացում հաստատման, որը ներառում է նաև թվայնացված մոդուլի ձևավորման և կառավարման տեխնիկական պահանջները:	ՀՀ վարչապետի 705-Ա որոշում, 12.08.2025 – e-gov.am
ՀՀ Վարչապետի 2025թ. N 705-Ա որոշման 4-րդ միջոցառում – ենթաօրենսդրական ակտի մշակում և ներկայացում հաստատման, որը ներառում է նաև թվայնացված մոդուլի ձևավորման և կառավարման տեխնիկական պահանջները:	ՀՀ վարչապետի 705-Ա որոշում, 12.08.2025 – e-gov.am
Սենդայի գործողությունների ծրագրի, ԱՌԿ ազգային ռազմավարության և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների թվային մոնիթորինգային համակարգերի ձևավորման աջակցություն՝ իրավական և տեխնիկական շրջանակների մշակմամբ:	Կառավարության N 1717-Լ որոշմամբ (05.10.2023) հաստատված «Աղետների ռիսկերի կառավարման ռազմավարություն 2023–2030թթ. և 2023–2026թթ. գործողությունների ծրագիր»

7. Անդամների իրավունքներ

- Մասնակցել թեմատիկ խմբի նիստերին, աշխատանքային ենթախմբերին և քննարկումներին:
- Առաջարկել օրակարգային հարցեր, հանդես գալ նախաձեռնություններով և նորարար գաղափարներով:
- Ստանալ ԹԽ կողմից շրջանառվող փաստաթղթերը, արձանագրությունները, նյութերը և ԹԽ գործունեության հետ կապված այլ բնույթի տեղեկատվություն:
- Մասնակցել ձևավորվող փաստաթղթերի (կամ այլ բնույթի վերջնարդյունքի) մշակման աշխատանքներին ինչպես հեղինակ, այնպես էլ խորհրդատու:
- Առաջարկել թեմային համապատասխան փորձագետների կամ կազմակերպությունների ներգրավում:
- Անհրաժեշտության դեպքում ունենալ տվյալների հասանելիություն՝ սահմանված մակարդակներով և տվյալների պաշտպանության կանոններով:
- Ցանկացած ժամանակ դուրս գալ ԹԽ կազմից՝ նախապես տեղեկացնելով ԹԽ քարտուղարությանը:

8. Անդամների պարտականություններ

- Կանոնավոր կերպով մասնակցել հանդիպումներին:
- Ունենալ փորձագիտական ներդրում իրականացվող աշխատանքներում և ձևավորվող վերջնարդյունքների մեջ (որպես հեղինակ կամ խորհրդատու):
- Պահպանել տվյալների գաղտնիության/հասանելիության կանոնները և աղբյուրների նշման պահանջները:
- Նպաստել մշակված լուծումների կիրառմանը և հետադարձ կապի տրամադրմանը:
- Աշխատանքների բաժանման արդյունքում պարտաճանաչ և որակով կատարել ստանձնած աշխատանքները:
- Հնարավորության սահմաններում օժանդակել սահմանված խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆոնդհայթայթմանը:

9. Թեմատիկ խմբի աշխատաքների համակարգում և կազմակերպում

- **Համակարգում.** Խմբի գործունեությունը համակարգում է ՀՀ Ներքին գործերի նախարարությունը:
- **Աշխատանքների կազմակերպում.** Իրականացվում է քարտուղարության կողմից: «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը հանդես կգա որպես քարտուղարություն՝ «Խնդիրներ» ենթաբաժնի 2.1 և 2.2 կետերի մասով այդ

պարտականությունները կիսելով Ասիական զարգացման բանկի հետ, 2.3 և 2.4 կետերի մասով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ:

➤ **Քարտուղարության կողմից իրականացվում է.**

- Թես հանդիպումների կազմակերպումը,
- փաստաթղթաշրջանառության ապահովումը,
- հանդիպումների արձանագրումը և արխիվացումը,
- կարծիքների, դիտարկումների և առաջարկությունների հավաքագրումը և տրամադրումը աշխատանքային խմբին/երին,
- հանդիպումների և արդյունքների լուսաբանումը,
- արդյունքները լիազոր մարմնին ներկայացնելը և կազմակերպական բնույթի այլ աշխատանքներ:

10. Ժամանակացույց

Մեկնարկի ամսաթիվ՝ փետրվարի 10, 2025թ.

Հանդիպումների հաճախականություն՝ ԱՌԿՓՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ հայեցակարգի ձևավորման աշխատանքների համար աշխատանքային խմբի հանդիպումների հաճախականությունը սահմանվում է խմբի մասնակիցների կողմից, ելնելով Թես աշխատանքների առարկա հանդիսացող փաստաթղթերի մշակման հրատապությունից:

Տարեկան վերանայում՝ Թեմատիկ խմբի գործունեության առաջընթացն ու արդյունավետությունը կվերանայվեն տարեկան՝ անհրաժեշտության դեպքում գործառնական ընթացակարգերի թարմացումներով:

11. Կարևոր փաստաթղթեր

№	Փաստաթուղթ / որոշում	Գործողություն	Հղում	Աղբյուր
1	Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին ՀՀ օրենք (18.04.2025 թ.)	Ներբեռնել PDF	Ներբեռնել PDF	Այս օրենքն ընդունվել է 2025 թ. ապրիլի 18-ին՝ նախատեսելով, որ ուժի մեջ է մտնում 2027 թ. հունվարի 1-ից
2	Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք (07.05.2002 թ.)	Ընթերցել ARLIS-ում	Կարդալ օրենքը	Օրենքը սահմանում է տեղական ինքնակառավարման սկզբունքները, սահմանափակումները և ընդունվել է 2002 թ. մայիսի 7-ին

3	Աղետների ռիսկերի կառավարման ազգային ռազմավարություն (2023–2030 թթ.) և գործողությունների ծրագիր (2023–2026 թթ.)	Վարչապետի որոշում և ծրագիր	Կարդալ որոշումը	Կառավարության որոշման մեջ (N 1717-Լ, 05.10.2023) հաստատված են աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը
4	Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակային ծրագիր (2015–2030 թթ.)	Վերաբերյալ PDF	UNDRR էջ և PDF	Սենդայի շրջանակային ծրագիրը սահմանում է 7 նպատակ և 4 առաջնահերթություն՝ աղետների ռիսկի կանխարգելման և նվազեցման համար; այն ընդունվել է 2015 թ. Սենդայում
5	«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքի կիրարկումը ապահովող միջոցառումների ցանկ»-ը հաստատելու մասին ՀՀ վարչապետի 705-Ա որոշում (12.08.2025 թ.)	Որոշման էջ	ՀՀ վարչապետի 705-Ա որոշում	Որոշման PDF-ում սահմանված են օրենքի կիրարկման հիմնական միջոցառումները և ժամկետները
6	«Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ վարչապետի 183-Լ որոշում (11.02.2021 թ.)	Կարդալ որոշումը	Կարդալ որոշումը	Որոշմամբ (N 183-Լ, 11.02.2021) հաստատվում է Հայաստանի թվայնացման ռազմավարությունը և դրա միջոցառումների ծրագիրը
7	Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 – Մեգանպատակ 02 «Պաշտպանված Հայաստան»	Վարչապետի տեղեկանք	Վարչապետի մամուլ հաղորդագրություն	Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրել է մինչև 2050թ. Հայաստանի վերափոխման ռազմավարությունը՝ ընդգծելով, որ այն համազգային շարժում է և

				մշակվում է՝ հիմնվելով ազգային արժեքների ու նպատակների վրա
8	«Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021–2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 1902-Լ որոշում (18.11.2021 թ.)	Կարդալ որոշումը	Կարդալ որոշումը	Որոշմամբ (N 1902-Լ, 18.11.2021) հաստատվում է ՀՀ կառավարության 2021–2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը